

Պ-801-10.12.2020-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՍԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 5-րդ մասում՝

- 1) 4-րդ նախադասության «նշանակման» բառը փոխարինել ««նշանակումից հետո եռօրյա ժամկետում Ազգային ժողովի նախագահի կողմից Խորհրդի անհատական կազմը հաստատելու» բառերով.
- 2) 5-րդ նախադասության «չնշանակվելու դեպքում» բառերից հետո լրացնել «եռօրյա ժամկետում Ազգային ժողովի նախագահի կողմից Խորհրդի անհատական կազմը հաստատելու օրվանից» բառերը:

Հոդված 2. Օրենքի 10.1-ին հոդվածի՝

- 1) 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետը «Թեկնածուի» բառից հետո լրացնել «Հանձնաժողովի անդամի պաշտոնի համար անհրաժեշտ» բառերով.
- 2) 1-ին մասի 7-րդ կետը «անցկացմանը» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ մրցույթի արդյունքներին» բառերով.
- 3) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաեւ հեռավար»:

Հոդված 3. Օրենքի 10.2-րդ հոդվածի՝

- 1) 12-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Սահմանված ժամկետում թերությունները չվերացնելու կամ կրկին ներկայացված փաստաթղթերը անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքում Խորհուրդը եռօրյա ժամկետում կայացնում է որոշում հայտի ընդունումը մերժելու մասին, և այդ մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմը էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցում է հավակնորդին: Մրցութային Խորհրդի՝ հայտի ընդունումը մերժելու մասին որոշումը հավակնորդը կարող է դատական կարգով բողոքարկել մերժումը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ընդունման մերժումը դատական կարգով բողոքարկելու դեպքում հավակնորդը կարող է մասնակցել մրցույթին: Հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում հավակնորդը առանց նոր հայտ ներկայացնելու շարունակում է մասնակցել մրցույթին, իսկ եթե մրցույթը ավարտվել է՝ նոր մրցույթին: Հայցը մերժելու դեպքում հավակնորդը դուրս է մնում մրցույթից, իսկ եթե մասնակցել է որևէ փուլի, համարվում է չմասնակցած՝ անկախ արդյունքից»:

2) 25-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 10.3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«խորհուրդը Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու ընտրելու վերաբերյալ իր որոշումը, իսկ սույն օրենքի 10.2-րդ հոդվածի 24-րդ մասով նախատեսված դեպքում՝ Հանձնաժողովի անդամների պաշտոնում թեկնածուներ ընտրելու վերաբերյալ իր որոշումը և թեկնածուների ցուցակը, ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը երեք աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմի միջոցով ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին»:

2) 2-րդ մասում՝ «Ցուցակին» բառը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերին» բառերով, իսկ «արձանագրությունները» բառից հետո լրացնել «եւ որոշումները, իսկ անհրաժեշտության դեպքում» բառերը, «ներկայացված» բառից հետո լրացնել «այլ» բառը:

Հոդված 5. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում Ազգային ժողովի նախագահն ընդունում է 2019 թվականի դեկտեմբերի 6-ին առաջացած թափուր պաշտոնում թեկնածու ընտրելու համար ձեւավորվող մրցութային խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին իրավական ակտ:

3. Ազգային ժողովի նախագահը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի՝ 2019 թվականի դեկտեմբերի 6-ին առաջացած թափուր պաշտոնում թեկնածու ընտրելու նպատակով մրցույթն Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով հայտարարում է Ազգային ժողովի նախագահի կողմից մրցութային խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին իրավական ակտը հրապարակելուց և մրցութային խորհրդի անդամներին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից հետո՝ 60 օրվա ընթացքում:

4. Ազգային ժողովի խորհուրդը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը, Մարդու իրավունքների պաշտպանը եւ Փաստաբանների պալատը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի՝ 2019 թվականի դեկտեմբերի 6-ին առաջացած թափուր պաշտոնում թեկնածու ընտրելու համար ձեւավորվող մրցութային խորհրդի նոր անդամ չեն նշանակում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿՈՐՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆՔԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ «ԿՈՐՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆՔԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԵՐԱՔԵՐՅԱԼ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 5-րդ մասում՝

3) 4-րդ նախադասության «նշանակման» բառը փոխարինել «նշանակումից հետո երջողա ժամկետում», Ազգային ժողովի նախագահի կողմից խորհրդի անհատական կազմը հաստատելու» բառերով,

Удалено: բառից

Удалено: հետո լրացնել

Удалено: եւ

Удалено: :

2) 5-րդ նախադասության «չնշանակվելու դեպքում» բառերից հետո լրացնել «երջողա ժամկետում Ազգային ժողովի նախագահի կողմից խորհրդի անհատական կազմը հաստատելու օրվանից» բառերով: **Հոդված 2.** Օրենքի 10.1-ին հոդվածի

Удалено: ¶

1) 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետը «Թեկնածուի» բառից հետո լրացնել

Удалено: :

« Հանձնաժողովի անդամի պաշտոնի համար անհրաժեշտ» բառերով,

Удалено: :

2) 1-ին մասի 7-րդ կետը «անցկացմանը» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ մրցույթի արդյունքներին» բառերով,

Удалено: :

Удалено: :

3) 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նախադասությամբ. «խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաեւ հեռավար»:

Հոդված 3. Օրենքի 10.2-րդ հոդվածի՝

Удалено: բովանդակությամբ

1) 12-րդ մասը լրացնել հետեւյալ նախադասությամբ.

«Սահմանված ժամկետում թերությունները չվերացնելու կամ կրկին ներկայացված փաստաթղթերը անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքում խորհուրդը երջողա ժամկետում կայացնում է որոշում հայտի ընդունումը մերժելու մասին, և այդ մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմը էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցում է հավակնորդին: Մրցութային խորհրդի՝ հայտի ընդունումը մերժելու մասին որոշումը հավակնորդը կարող է դատական կարգով բողոքարկել մերժումը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ընդունման մերժումը դատական կարգով բողոքարկելու դեպքում հավակնորդը կարող է մասնակցել մրցույթին: Հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում հավակնորդը առանց նոր հայտ ներկայացնելու շարունակում է մասնակցել մրցույթին, իսկ եթե մրցույթը ավարտվել է՝ նոր մրցույթին: Հայցը մերժելու դեպքում հավակնորդը դուրս է մնում մրցույթից, իսկ եթե մասնակցել է որևէ փուլի, համարվում է չմասնակցած՝ անկախ արդյունքից»:

2) 25-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 10.3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«խորհուրդը Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու ընտրելու վերաբերյալ իր որոշումը, իսկ սույն օրենքի 10.2-րդ հոդվածի 24-րդ մասով նախատեսված դեպքում՝ Հանձնաժողովի անդամների պաշտոնում թեկնածուներ ընտրելու վերաբերյալ իր որոշումը և թեկնածուների ցուցակը, ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը երեք աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմի միջոցով ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին:».

2) 2-րդ մասում՝ «Ցուցակին» բառը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերին» բառերով, իսկ «արձանագրությունները» բառից հետո լրացնել «եւ որոշումները, իսկ անհրաժեշտության դեպքում» բառերը, «ներկայացված» բառից հետո լրացնել «այլ» բառը:

Удалено: մասը

Удалено: ով

Удалено: բառերով

Удалено: իսկ

Հոդված 5. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում Ազգային ժողովի նախագահն ընդունում է 2019 թվականի դեկտեմբերի 6-ին առաջացած թափուր պաշտոնում թեկնածու ընտրելու համար ձեւավորվող մրցութային խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին իրավական ակտը:

3. Ազգային ժողովի նախագահը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի՝ 2019 թվականի դեկտեմբերի 6-ին առաջացած թափուր պաշտոնում թեկնածու ընտրելու նպատակով մրցույթն Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով հայտարարում է Ազգային ժողովի նախագահի կողմից մրցութային խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին իրավական ակտը հրապարակելուց և մրցութային խորհրդի անդամներին հրազեկելու օրվան հաջորդող օրվանից հետո՝ 60 օրվա ընթացքում:

4. Ազգային ժողովի խորհուրդը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը, Մարդու իրավունքների պաշտպանը եւ Փաստաբանների պալատը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի՝ 2019 թվականի դեկտեմբերի 6-ին առաջացած թափուր պաշտոնում թեկնածու ընտրելու համար ձեւավորվող մրցութային խորհրդի նոր անդամ չեն նշանակում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» [Պ-801-10.12.2020-ՊԻ-011/1](#) ԵՎ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակ	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ,	Նախագծով առաջարկվում է Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասում Խորհրդի ձևավորված լինելը պայմանավորել ոչ միայն սահմանված ժամկետում դրա կազմի բոլոր անդամների նշանակման հանգամանքով, այլ նաև Ազգային ժողովի նախագահի	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

		հողված 1 կողմից Խորհրդի անհատական կազմը հաստատելու փաստով: Միաժամանակ, Օրենքի 9-րդ հոդվածի նույն մասի հաջորդ նախադասությունը սահմանում է, որ սահմանված ժամկետում որևէ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից Խորհրդի անդամ չնշանակվելու դեպքում Խորհուրդը համարվում է ձևավորված նշանակված անդամների կազմով, եթե սույն մասով սահմանված կարգով նշանակվել է Խորհրդի առնվազն երեք անդամ: Առաջարկվում է սույն դրույթում ևս կատարել համապատասխան փոփոխություն՝ սահմանելով, որ (...) Խորհրդի անդամ չնշանակվելու դեպքում Խորհուրդը համարվում է ձևավորված նշանակված անդամների կազմով Ազգային ժողովի նախագահի կողմից Խորհրդի անհատական կազմը հաստատելու օրվանից, եթե սույն մասով սահմանված կարգով նշանակվել է Խորհրդի առնվազն երեք անդամ: Միաժամանակ, առաջարկվում է հստակեցնել Ազգային ժողովի		
--	--	--	--	--

			նախագահի կողմից Խորհրդի անհատական կազմը հաստատելու ժամկետները:		
2.	Հեղինակ	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 3	Առաջարկվում է հստակեցնել հավակնորդի հայտի ընդունումը մերժելու մասին որոշման կայացման ժամկետը, դրա մասին ծանուցման ժամկետները ու եղանակը՝ միաժամանակ սահմանելով բողոքարկման իրավունքի իրացման կառուցակարգեր:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
3.	Հեղինակ	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 4	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ Խորհուրդը Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու ընտրելու վերաբերյալ իր որոշումը, իսկ սույն օրենքի 10.2-րդ հոդվածի 24-րդ մասով նախատեսված դեպքում՝ թեկնածուների ցուցակը, ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը երեք աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմի միջոցով ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Թեև տվյալ դրույթը գրեթե ամբողջությամբ վերարտադրում է Օրենքի 10.2-րդ	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	

			հողվածի 25-րդ մասի կարգավորումները, այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու ընտրելու վերաբերյալ Հանձնաժողովը կայացնում է որոշում՝ օրենքի 10.2-րդ հոդվածի 24-րդ մասով նախատեսված դեպքում ևս Հանձնաժողովը պետք է կայացնի համապատասխան որոշում: Վերոգրյալի համատեքստում՝ առաջարկվում է «իսկ սույն օրենքի 10.2-րդ հոդվածի 24-րդ մասով նախատեսված դեպքում» բառերից հետո լրացնել «Հանձնաժողովի անդամների պաշտոնում թեկնածուներ ընտրելու վերաբերյալ իր որոշումը և» բառերը: Ըստ այդմ, առաջարկվում է նաև 2-րդ մասում «Ցուցակին» բառը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերին» բառերով:		
4.	Հեղինակ	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»	Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մրցութային խորհրդի անհատական կազմը հաստատելու նպատակով ընդունվելու է անհատական իրավական ակտ՝ Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվում է նախատեսել	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

		օրենքի նախագիծ, հոդված 5, մաս 3	կարգավորում՝ առ այն, որ մրցույթն Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով Ազգային ժողովի նախագահի կողմից հայտարարվում է ոչ միայն Ազգային ժողովի նախագահի կողմից մրցութային խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին իրավական ակտը հրապարակելու, այլ նաև մրցութային խորհրդի անդամներին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից		
--	--	------------------------------------	---	--	--